


ԼՌԵԼԸ ՈՍԿԻ Է՞

Posted on February 21, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



✘ Հեղինակ՝ Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 23 Փետրուար 2010

Հակառակ հայկական առաժի հաւաստումին, այս պարագային՝ անկասկած Ո՛Չ : Աւելի ուղիղ պիտի ըլլար ըսել թէ լռելը այս պարագային անհոգութիւն է, անտարբերութիւն, անհեթեթութիւն, անհաւասարակչոռութիւն, անհաւատարմութիւն, անհասկացողութիւն, անակնածութիւն, անգեղագիտութիւն, անխոհեմութիւն, սնանկութիւն, աննախատեսութիւն, անպարտաճանաչութիւն, անփութութիւն, սնանկութիւն, անգթութիւն, մեղսակցութիւն, մէկ խօսքով՝ դաւաճանութիւն հայ արժեքներու հանդէպ:

✘ Հեղինակ՝ Ոսկան Մխիթարեան, Լոս Անճելըս, 23 Փետրուար 2010

Հակառակ հայկական առաժի հաւաստումին, այս պարագային՝ անկասկած Ո՛Չ : Աւելի ուղիղ պիտի ըլլար ըսել թէ լռելը այս պարագային անհոգութիւն է, անտարբերութիւն, անհեթեթութիւն, անհաւասարակչոռութիւն, անհաւատարմութիւն, անհասկացողութիւն, անակնածութիւն, անգեղագիտութիւն, անխոհեմութիւն, սնանկութիւն, աննախատեսութիւն, անպարտաճանաչութիւն, անփութութիւն, սնանկութիւն, անգթութիւն, մեղսակցութիւն, մէկ խօսքով՝ դաւաճանութիւն հայ արժեքներու հանդէպ:

Դարերու ընթացքին կուտակուած Հայ ժողովուրդի անվերականգնելի գանձերը ո՛չ միայն յանձնուած են բախտի անիւին , այլեւ ենթակայ են կամաւոր լուծարքի ահհատներու կողմէ, որոնք ո՛չ միայն չեն դատապարտուիր օրէնքի առջեւ, այլեւ անուղղակի կերպով քաջալերանք կը ստանան Մխիթարեան Միաբանութեան “ղեկավարութեան” կողմէ, որովհետեւ այս վերջինները իրենց անհոգութեամբ եւ դիտաւորեալ անտարբերութեամբ քաջալերած կ’ըլլան լուծարքի “ոճիրը”:

Այո՛ խօսքս կ’երթայ Մխիթարեան Միաբանութեան հազարամեայ գանձերուն, որոնք այսօր նետուած են թէ՛ Վիեննայի, եւ թէ՛ Վենետիկի վանքերու փոշեթաթախ խոնաւ սենեակներուն մէջ: Եթէ առիթը ունեցած էք տեսնելու եւ վայելելու այս գանձերէն մաս մը, չէք կրնար անտարբեր մնալ եւ ջուզուիլ այսօր, երբ կը տեսնէք ընհանուր վիճակը այս գանձերուն, որոնք աչքի լոյսի պէս պահուած էին անցեալին, հաւատաւոր եւ նուիրեալ միաբաններու կողմէ: Իսկ այսօր՝ միաբան հայրերու թիւի նուազումով, ղեկավարութեան անհոգութեան եւ անփութութեան հետեւանքով, անգնահատելի եւ անգտանելի այս արժեքները նետուած են հոս ու հոն փոշեթաթախ խոնաւ սենեակներու անկիւնները:

Ահաւասիկ մեր դարաւոր գանձերուն այս անկազմակերպ վիճակը լաւագոյն առիթը կընծայէ անխիղճ միաբաններուն, եթէ կարելի է գանոնք միաբան կոչել իրենց ապրելակերպով եւ համոզումներով, որոնք անձնական շահեր ակնկալելու դիտաւորութեամբ կը ծախեն այս անվերականգնելի եւ անգնահատելի արժեքները: Վերջապէս, ո՞վ պիտի սաստէ զիրենք:

Եթե ինձի պես առիթը ունեցած էք բազմիցս մտնելու եւ աշխատելու այս գանձատուններուն մէջ, չէք կրնար լուռ եւ անտարբեր մնալ կատարուած կողոպուտներուն հանդէպ: Անցեալ տարի Եւրոպական, մասնաւորաբար Գերմանական եւ Հայկական մամուլը լայնօրէն անդրադարձան Վիեննայի Վանքէն կատարուած լայնածաւալ գողութիւններուն մասին (մանրամասնութեանց համար կարդալ իմ նախորդ յօդուածներէս՝ “Ռ՞՞՞՞՞ Է գողը” www.hetq.am կայքէջին վրայ): Անշուշտ ոստիկանութեան եւ դատարանային հետապնդումներու շնորհիւ կարելի եղաւ յայտնաբերել եւ, դժբախտաբար միայն մասամբ, կրկին ձեռք ձգել մշակոյթի եւ արուեստի ազգային եւ միջազգային այս անգնահատելի գանձերը, որոնք դարեր ամբողջ գուրգուրանքով պահուած, պահպանուած ու արժեւորուած էին Միսիթարեան վաստակաւոր միաբաններու կողմէ:

Երկար պիտի ըլլար թուարկումը անհետացած թանկարժէք գիրքերուն, քարտէսներուն, իրեղէններուն, արուեստի գործերուն. Չորն ասեմ, զո՞րն խոստովանիմ: Ինչպէ՞ս առաջքը առնել այս դիտաւորեալ լուծարքին, անշուշտ ակելի ճիշտ պիտի ըլլար ըսել՝ այս կողոպուտին: Շատ մօտիկ անցեալին տեսանք թէ ինչպէ՞ս թանկարժէք գիրքեր վաճառուեցան ձախ ու աջ՝ զանազան անհատներու E-bay ի վրայ ալ կրնաք գտնել գիրքեր, հրատարակուած թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Վիեննայի մէջ, որոնք այսօր սպառած են, եւ չկան՝ ո՛չ միայն ծախու, այլեւ մատենադարաններուն մէջ: Հետեւաբար, ինչպէ՞ս օգնել պարկեշտ միաբաններուն, որոնք նո՛յնքան կը տառապին ի տես այս կողոպուտին եւ դժբախտաբար անկարող են առաջքը առնելու այս լուծարքին:

Նկատի ունենալով իմ առաւել քան քսան տարիներու շատ մտերիմ կապերս Միսիթարեան Միաբանութեան հետ, կը թելադրեմ անյապաղ ստեղծել մասնագետներէ եւ իրաւաբաններէ բաղկացած արտաքոյ կարգի յանձնախումբ մը, ներառնելով պարկեշտ մէկ կամ երկու ներկայացուցիչ միաբանութենէն, խուսափելու համար այն դաժան իրողութենէն որ պատահեցաւ անցեալին, եօթանասունական թուականներէն սկսեալ, երբ հանգուցեալ Հ. Պօղոս Վրդ. Անանեան Աբբահօր օրով տեղի ունեցան կալուածային մեծածաւալ ձեռքբերումներ ինչպէս նաեւ շինարարական ձեռնարկներ, որոնց գլխաւոր նպատակն էր մնայուն եւ հասութեաբեր եկամուտներ ապահովել միաբանութեան համար:

Դժբախտաբար սոյն մեծղի գործարքներու մատակարարման համար՝ գործարարական ոլորտի (business world) փորձէ զուրկ միաբաններու կողքին՝ չհրաւիրուեցան մասնագետ աշխարհականներ, որոնք կարենային մօտէն հետեւիլ եւ որոշ ապահովութիւն մը ընձեռել վերոյիշեալ ծրագիրներուն: Այս բոլոր ձախողութիւնները Միսիթարեան Միաբանութիւնը ակնյայտ սնանկութեան մը սեմին հասցուցին: Ահաւասիկ այս նոր յանձնախումբը անմիջապէս պիտի լծուի աշխատանքի՝ ցանկագրելու մեր բոլոր հազարամեայ գանձերը, նոյն ատեն մտահոգուելով անոնց առողջ պահպանութեամբ, հաշուետու ըլլալով նաեւ օրէնքի առջեւ, որեւէ խախտումի պարագային: Միայն

այսպիսի վեհանձն եւ նուիրեալ խմբակի մը աշխատակցութիւնը պիտի կարենայ
առաջըը առնել նոր գողութիւններու եւ կողոպուտներու:

2000 թուականի “Միութենէն” ետք, յստակ ու վաւերացեալ սահմանադրութեան եւ
կանոնագրութեան մը չգոյութիւնը պատճառ դարձաւ նաեւ, որ անընդհատ օրինական
խախտումներ տեղի ունենան զանազան մարզերու մէջ, ըլլան անոնք միաբանական
ներքին կեանքէն ներս, եւ կամ առաքելավայրերու մէջ տեղի ունեցած
դժուարութիւններու պարագային, ի վերջոյ առիթ տալով որ անխոհեմ եւ
անպատասխանատու “ղեկավարը” ըստ կամս տնօրինէ ամէն ինչ, վնաս հասցնելով
տնտեսապէս այդ գործի յաջողութեան, նոյն ատեն հարցականի տակ դնելով ամբողջ
միաբանութեան վարկը:

Կը յուսանք որ մեր ակնկալութիւնները ի դերեւ չեն ելլեր երբ այս տարեվերջին, միակամ
եւ միահամուռ, Միխիթարեան Միաբանութիւնը իր վիզէն կը թօթափէ ծանր անուրը, որ
պարտադրաբար դրուած է Արեւելեան Խորհուրդի ներկայացուցիչին կողմէ. այլ խօսքով՝
Նշանակովի “ղեկավարին” հրաժարականը անգամ մը եւս կը պահանջէ, եւ անոր տեղ
կ’ընտրէ տիպար եւ արժանաւոր հոգեւորական մը, որպէսզի միաբանութիւնը
պատրաստէ ազգային կեանքի եւ մատղաշ սերունդի դաստիարակութեան նոր
մարտահրաւերներուն:

Այս նոր աշխատանքին մէջ իր կարելոր եւ մեծ դերը պիտի ունենայ նաեւ արտաքոյ
կարգի յանձնախումբը, որ իր կարգին զօրավիզ պիտի կանգնի արժանաւոր նորընտիր
Աբբահայրին, որպէսզի անոր քայլերը ըլլան աննկուն, մեկին եւ արդիւնաշատ:

